Արձանագրություն N 5

«Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար դեղորայքի և բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-2020/5» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի վերագնահատման նիստի

ք. Երևան «6» հոկտեմբերի 2020թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Հակոբյան
Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Պողոսյան
Ա. Ալեքսանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Ասատրյան

1. ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-2020/5 ծածկագրով գնման ընթացակարգի 1, 4, 5, 6, 13, 18, 22, 38, 44, 64, 86, 91, 96, 99 չափաբաժինների մասով պայմանագրի նախագծի սահմանված ժամկետում չկնքման վերաբերյալ
(Ա. Հակոբյան)

1.1 ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-2020/5 ծածկագրով գնման ընթացակարգի 1, 4, 5, 6, 13, 18, 22, 38, 44, 64, 86, 91, 96, 99 չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչված «Աբամա թրեյդ» ՍՊԸ-ին հրավերով սահմանված կարգով ծանուցվել է պայմանագիր կնքելու մասին և առաջարկվել 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել և ներկայացնել պատվիրատուին: Նշված ժամկետում «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի ապահովումը, ուստի՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից»: «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն զրկվում է նշված պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05. 2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը՝ «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի /ՀՎՀՀ 02825811/ տվյալները, ներառյալ համապատասխան հիմքերը, ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ հաշվի առնելով, որ առկա են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա և բ մասերով նախատեսված հիմքերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-2020/5 ծածկագրով գնման ընթացակարգի 1, 4, 5, 6, 13, 18, 22, 38, 44, 64, 86, 91, 96, 99 չափաբաժինների մասով գնման հայտերը վերագնահատելու և գործընթացը շարունակելու մասին
(Ա. Հակոբյան)

ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-2020/5 ծածկագրով գնման ընթացակարգի 1, 4, 5, 6, 13, 18, 22, 38, 44, 64, 86, 91, 96, 99 չափաբաժինների մասով վերագնահատել հայտերը: 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչել «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ին հետևյալ չափաբաժինների համար՝ 4, 5, 18, 38, 44, «Ռիխտեր- Լամբրոն ՀՁ» ՍՊԸ-ին հետևյալ չափաբաժինների համար՝ 6, 22, 64, «Արփիմեդ» ՍՊԸ-ին հետևյալ չափաբաժինների համար՝ 13, «Զայնա մոլլ» ՍՊԸ-ին հետևյալ չափաբաժինների համար՝ 96, «Արֆարմացիա» ՓԲԸ-ին հետևյալ չափաբաժինների համար՝ 1, 86, 91, 99:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ հաստատել պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ: Անգործության ժամկետը սահմանվում է 5 օրացուցային օր:

2.2 Անգործության ժամկետի ավարտին հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակիցներին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Հակոբյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Ալեքսանյան

_____ Դ. Պողոսյան

Քարտուղար՝ _____ Ս. Ասատրյան